ԵՐԵՔՇԱԲԹԻ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1881—№ 250

№ 250—ԵՐԵՔՇԱԲԹԻ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1881

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ редакцію газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

Խմբագրութեանս ուղղած Թէ՛ յօդուածները եւ Թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ պահանջը։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ։
Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը եւ պ. Շահվերդեանի գրավիլիօնում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳՈՍԱՆԵՒԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1882 Թ.

Կրնհրատարակվի ևոյնիդիրքով եւ ուղղութեամբ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։ Առաջնորդող յօդուածներ, ազգային, քաղաքական, հեռագիրներ, բանասիրական, ֆեյլիէտօն, մանր լուրեր, խառն լուրեր, պատասխանիք խմբագրութեան, եւ յայտարարութիւններ։

Տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի։ Ստորագրվել կարելի է խմբագրատանը, հեռագրական կայարանի մօտ Ս. Վարդանեանի տանը։ Փոստային եւ տուն հասցնելու ԹՈՒԹԸՐ խմբագրութեան վերայ է։

Ծանօթ.։ Ներկայ թուականին «ՄԵՂՈՒՆ» հրատարակվեցաւ չաբաթը վեց անգամ, օգնութեամբ «Հաւատարմական Ընկերութեան», որ այս տարի բաւական նշանաւոր դէֆիցիտ ունեցաւ։ Առաջիկայ տարին «ՄԵՂՈՒԻ» վեց թէ աւելի պակաս կամ աւելի շատ անգամ հրատարակվելը կախումն կ՚ունենայ ստորագրվողների թուից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Ազգային.—Թղթակցութիւններ Ս.-Պետերբուրգից, (երկու հատ) Ալէքսանդրապօլից եւ Թէլաւից.
Քաղաքական.—Անգլիա.— Քաղաքական լուրեր.
Մեղուի հեռագիրներ.
Մանր լուրեր.
Խառն լուրեր.
Մատենախօսութիւն.—պ. (Ն. Ս. Թամաճեանի հայկական ձայնագրութեան դասագիրքը)։
Յայտարարութիւններ.

ԱԶԳԱՅԻՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Ըէ մի հայ գերդաստան Ռուսաստանում, իր անշափ բարերարութիւնով յօդուտ հայոց ազգի, չունի այնքան իրաւունք ընդհանուր յարգանքի և երախտագիտութեան վրայ, ինչքան Լազարեանների գերդաստանը, Մոսկվայի արևելեան լեզուաց ձեմարանի հիմնող և Մոսկվայի և և Պետերբուրգի հայոց եկեղեցեաց կառուցանողը։

Բարերարութիւններն, որ Լազարեաններն արել են ռուսաբնակ հայերին, ուսման վերաբերութեամբ, բաւական մեծ են։

Դրդած ազգասիրական զգացմունքից և ազնիւ ցանկութիւնից օգուտ բերելու ուսման վերաբերութեամբ իրաց ազգակից հայերին՝ հարազատ եղբարք Յովհաննէս և Յովակիմ Լազարեաններն ունեցան միտք հիմնելու Մոսկվայում հայոց ուսումնարան, որտեղ խեղճ հայերի որդիք ուսում առնել կարողանային։ Եւ ճշմարիտն ասած հանգուցեալ եղբարց Լազարեանների այսպիսի ազնիւ միտքը հասաւ իւր սուրբ նպատակին։ 1815-ին, Մոսկվայում Յովակիմ Լազարիվիչ Լազարեանի հիմնած ձեմարանը դարձաւ լուսաւորութեան արդար սերմանող Ռուսաստանի հայերի մէջ։

Յովակիմ Լազարևվիչի հարազատ որդիք Յովհաննէս և Խաչատուր Եակիմովիչ Լազարեանները բարերարութեան ասպարիզումը յօդուտ հայերի, գերազանցեցին աւելի ձեմարան վերոյիշեալ հիմնողներից. նոցա աշխատասիրութիւնով այս ուսումնարանը իր յառաջադիմութիւններով, ուսումնական վերաբերութեամբ այնքան առաջ գնաց, որ այժմ կարող է լռնել պատուաւոր տեղ ռուսաց ուսումնարանների շարքում։

Շատ հազարաւոր հայեր իրանց լուսաւորութիւնով և ապահոված կեանքով պարտական են Լազարեաններին գերդաստանին և նրանցից հիմնած ձեմարանին։

Հանգուցեալ Լազարեանները չէին բաւականանում սահմանադրելով իրանց բարերարութիւնը, նրանով որ միայն հիմնեն Մոսկվայում ձեմարան և այնտեղ խեղճ հայերին, իրանց ծախսով ուսում տան, ոչ այլ նրանք միշտ պատրաստ էին ամենին, ով որ նրանց դիմում էր, ցոյց տալու իրանց պաշտպանողութիւնն և և դրամական օգնութիւնը։

Կային շատ հայ երիտասարդներ, որոնք Լազարեանների ծախսով պատրաստվում էին ռուսաց և եւրոպական ուսումնարաններում ուսում էին առնում, նմանապէս շատ շարադրութիւններ, որոնք հրատարակելու արժանի էին գտնվում՝ տպագրվում էին միևնոյն Լազարեանների օժանդակութիւնով։

Բոլոր Լազարեանների ընդհանուր բարերարութեան ձայնը ամեն տեղ այնպէս է տարածվել, որ Հնդկաստանից, Պարսկաստանից, Եգիպտոսից, փոքր-Ասիայից և ամբողջ Ռուսաստանից խեղճ հայեր պետերբուրգ են գալիս, ուռով մանգալով, հազարաւոր վկրտեր անցնելով, որ միայն Լազարեանների տան անդամների բարերարութեան առատութիւնից շահվին։ Իւրաքանչիւր անձն այս ճանապարհորդներից իւր կարօտութեանը բաւական օգնութիւն էր ստանում։

Բարեգործութեան և բարերարութեան մէջ, որ բոլոր Լազարեանների յատկութիւնն է, չը կամեցաւ այս գերդաստանի անդամներից չէտ մընալ խաչատուր Եակիմովիչի հանգուցեալ ամուսին Եկատերինա Էմմանուէլովնա Լազարեանը։

Ցանկալով իւր կողմից օգնել հայոց ազգին և ցոյց տալ իւր մեծահոգութիւնը հանգուցեալ Եկատերինա Էմմանուէլովնան Լազարեանի հոգին Աստուած լուսաւորէ։

Շատ ցանկալի կը լինէր, որ Ռուսաստանի ուրիշ հայոց հարուստ գերդաստանները բարերարութենումը, յօդուտ հայոց, Լազարեաններից օրինակ առնէին։

Բայց հայերի տարարաղդութիւնից ընդհանրապէս հայոց հարուստ գերդաստաններն այս չեն անում և իրանց այսպիսի բարի գործողութիւններից շատ հեռու են բռնում։

Այն ժամանակ, երբ արժանապատուելի Լազարեաններն, իրրև մեծահոգի և լուսաւորեալ անձինք, հասկանալով հասարակական բարերարութեան մեծ նշանակութիւնը, միշտ աշխատում են — իւրաքանչիւր անդամ նրանցից—կենդանութեան ժամանակ սերմանել ամենայն լաւութիւն իրանց ազգակից և հաւատակից հայերի օգտի համար, նոքա չեն մոռանում և հանգուցեալ անձանց կամքն և ցանկութիւնն ազնուապար կատարելու, որոյ ապացոյց կարող է լինել հանգուցեալ Եկատերինա Էմմանուէլովնայի կամքի և ցանկութեան մեծահոգի կատարումն նրա արժանաւոր աղջկերանց կողմից։

Ահա այս հանգամանաց պատճառաւ Լազարեանների գերդաստանը ունէ անվիճելի իրաւունք ընդհանուր յարգանաց և երախտագիտութեան բոլոր հայերի կողմից։

Ց. Աբգէրեան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

26-ին նոյեմբերի

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Անհերքելի փաստ է, որ արքունական ուսումնարաններում շատ Թոյլ են սովորեցնում հայ լեզուն կամ աւելի ճիշտ ասած՝ ոչինչ չեն ուսուցանում։ Վարժապետը մտնում է դասատուն և սկսում է հարցնել աշակերտներից, էն էլ ինչ դաս։ Կարծում էք մի կանոնաւոր դաս էին տալիս, ոչ, մի քանի տող Եղիշէից ընթերցանութեան առանց ըմբռնելու կարդացածի միտքը, կամ Թէ որևիցէ Սաղմոսից, և ահա ինչումն էր կայանում բոլոր դասը։ Սակայն այդ ամենահասարակ և ծիծաղելի դասն անգամ պատրաստող չը կար մեր քաջ աշակերտներից։ «Է՛հ վարժապետ, քիչ-միչ հայերէն խօսելը գիտեմ էլի, ինչ է, տէրտէր իսմ չեմ դառնալու», լինում էր միշտ պատասխանը, երբ վարժապետը սովորութիւնից դուրս գալով՝ հարցնում էր դաս։ «Հինգ տրժէ, հինգ։ Շատ լաւ է պատասխանում, միաձայն գոռում էին մեւս աշակերտները և այսպէս ազատում էին իրենց ընկերներին նրա դժուար դրութիւնից։ Սկսած առաջի դասարանից մինչև ութերորդը այսպէս էին վերջանում հայոց լեզուի դասախօսութիւնները։ Այսպէս վերջացնում են միշտ շատերը ազգի զաւակներից իւրեանց ուսումը գիմնազիօնում առանց ծանօթ լինելու այն ազգի լեզուի հետ, որի արիւնից նրանք գոյացել են, որի ցաւը և ուրախութիւնը նրանցն է, որի մտաւոր, բարոյական և ֆիզիկական դրութեան բարւոքելը նրանց սրբազան պարտքն է, և վերջապէս, որի զարգացմանը նոքանք պէտք է նուիրեն իրենց բոլոր ոյժը և կարողութիւնը։ Բայց ինչ է պատճառը, որ մայրենի լեզուն աքսունի ուսումնարաններում այսպիսի խեղճ դրութեան մէջ է։

Այդ երևոյթի գլխաւոր պատճառները շատ են։ Բերենք մի քանիսը.—այդ մի քանիսներից առաջինը մեր ծնողներն են իրենց հրէշաւոր անտարբերութեամբ, որի համար ապագայ սերունդը միշտ դառն գանգատով պէտք է վարձատրէ նրանց. երկրորդը մեր արքունի ուսումնարանների հայ վարժապետների անտարբերութիւնը, որոնք մեծ մասամբ միշտ բարձր գաղափարների համբ և հոտը տեսած չեն լինում։ Նրանք այնքան զարգացած չեն լինում, որ կարողանային աշակերտներին հասկացնել իրենց սրբազան պարտակատնութիւնը. երրորդը այն է, որ աշակերտները ևս մինչև այն աստիճան զարգացած չեն լինում, որ կարողանային իրենց պատիւը հասկանալու։ Բարձր դասարաններում, ուղիղ է, նրանցից շատերը զգում են իրենց աններելի սխալը, բայց այդ սխալը ուղղելու միջոց չեն ունենում, այն պատճառով, որ նրանց բոլոր ոյժը նուիրած է հին լեզուներին, որի վերայ աշխատում են ամբողջ ութ տարի շարունակ և որոնցից կախուած է, նրանց ապագան, որոնցով պէտք է չափուի նրանց հասունութեան աստիճանը։

Այնքան ժամանակուայ աշխատանքից յետոյ, ուսանողը վերջապէս այդ վկայականով մտնում է համալ-

սարան, որտեղ շատ չանցած, նա զգում է իւր բոլոր տգիտութիւնը:

Ուսանողը ինչ գիտէ այդքան աշխատանքից յետոյ հին լեզուներից, բացի յունական և լատինական հոլովմունքը ու խոնարհմունքը: Ոչինչ. նոր լեզուների վերայ խօսմ չեմ էլ խօսում: Այստեղ համալսարանում նորանք միայն ուենեն միջոց ուսանել իրանց մայրենի լեզուն. այստեղ են միայն կրիտիկական հայեացք ձգում իրանց անցեալի վերայ. այստեղ, այո, նրանք զղջում են և սկսում պարապել իրանց լեզուով: Բայց ափսոս որ և այս դէպքում նրանք հանդիպում են անյաջող պայմանների:

Վերջացնելով իրանց ուսումը գիմնազիօններում, նորանք ցրվում են Ռուսաստանի զանազան անկիւններ, որտեղ զրկուած են լինում կենսական և գլխաւորապէս նիւթական միջոցներից ձեռք բերել հայերէն հեղինակութիւններ և լրագիրներ: Իմ կարծիքով մեր լրագրապետները մեծ օգնութիւն կարող էին անել հայ ուսանողներին, որով կատարած կը լինէին մի մարդասիրական պարտականութիւն: Ահա ինչպէս. ամեն մի համալսարանի ուսանողական ընթերցարանը ձրիաբար ստանում է զանազան լրագիրներ. մեր հայ լրագրապետները ևս կարող են ուղարկել այդ ընթերցարանին մի մի օրինակ հայ ուսանողների համար: Ի հարկէ մեր եղբայրների պարտականութիւնն է դրա մասին յայտնել լրագրի միջոցով: A propos, Պետերբուրգի համալսարանի ուսանողական ընթերցարանում ևս ըստ տագրում են Ռուսաստանի զանազան լեզուներով հրատարակվող լրագիրները: Մտնում ես ընթերցարանը, քրքրում ես բոլոր լրագիրները, ոչ մի քունջում մի հայ լրագրի հոտ անգամ չես գտնում: Վրացոց «Դիրէքտ» լրագիրը մինչև անգամ ստացվում է այստեղ, չը նայելով որ վրացի ուսանողները թուով շատ քիչ են հայերից: Զարմանալի բան, ինչո՞ւ մինչև հիմա հայ ուսանողները մեր լրագրապետների ուշադրութիւնը չեն դարձրել այս երևոյթի վերայ: Ուղիղ է, Պետերբուրգի հայ ուսանողական մատենադարանը ըստանում է մի քանի լամբագիրներից մի մի օրինակ, բայց որովհետև ուսանողները Պետերբուրգի պէս մի քաղաքում ապրելով, շատ սակաւ հաղորդակցութիւն են ունենում իրար հետ, այս պատճառով անկարելի է լինում ամենքին կարդալ ամեն օրուայ համարները: Այս պատճառով համալսարանի ուսանողական խմբի. կողմից պարտք եմ համարում դիմել դէպի ձեզ, մեծապատիւ խմբագիր, և խնդրել որ յանձն առնէիք մի մի օրինակ ևս ուղարկել համալսարանի ընթերցարանին, ուր կարելի կը լինէր ամեն մի հայ ուսանողի կարդալ ամեն օր իրեն հետաքրքրող հայ լրագիրները: Խոնարհաբար խնդրում ենք միևս հայ խմբագիրներին ևս չը զլանալ:

Շ. Մէլիք-Փաչիխեան:

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
17 Նոյեմբերի

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Արդէն «Մեղուի» ընթերցողներին յայտնի է, որ մեր քաղաքի պ. գաւառապետը թողեց իր պաշտօնը: Այժմ այդ պաշտօնն առժամանակ վարում է նորա աւագ-օգնական մեծ. վ. Շահխաթունեանը: Այս պարոնն իր մի քանի տարուայ աշխատութեամբ և ընդունակ գործունէութեամբ յայտնի է ինչպէս մեր ամբողջ գաւառին, նոյնպէս և քաղաքին. ուստի իր քաղցր ու խոհեմ բնաւորութեամբ գրաւել է նոցա սիրտը և սիրելի է ժողովրդեան, որով հետզհետէ յոյս կայ վերջանալու մեզանում կատարուած այն բոլոր անընդհատ չարագործութիւնները, որոնք իր ժամանակին տուել ենք ունեցել բողոքելու ձեր լրագրի էջերում: Մեր քաղաքը, միանգամայն և գաւառը վայելում է այժմ կատարեալ խաղաղութիւն այս կարճ միջոցում իշխորհս Պ. Շահխաթունեանի: Խելք է ասել, որ այս պարոնի իւր պաշտօնին մի աւելի մեծ յարմարութիւն ևս կարող է համարուել և այն նպաստիչ հանգամանքը, որ քաջ գիտենալով տեղական լեզուները, կենաքը և սովորութիւնները, այլ ևս միքանի տգէտ սարսրին պաշտօնեաներ, մանաւանդ թարգմաններ չեն կարող դեր խաղալ: Ռուսերէն չգիտցող մարդը շատ անգամ ենթարկվում է զանազան վերնախաւերի անընդհատ թարգմանների ձեռքովՇատ անգամ պատահել է մեզ տեսնել այնպիսի սխալ թարգմանութիւններ, որ գործի ամբողջ միտքն է խեղաթիւրել և ձգձմարտութեան փոխանակ՝ տուել պաշտպանութիւն իշխորհս տգէտ թարգմանների:

***

Թ Է Լ Ա Ի
13-ը Նոյեմբերի

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Վաղուց է, որ ուզում էի ձեր լրագրին՝ ժամանակ չունենալու պատճառաւ, իսկ այժմ յարմար միջոց ունենալով՝ գրում եմ ձեզ այս նամակը, ցանկանալով ծանօթացնել ձեր լրագրի ընթերցողներին Թէլաւի և նորա բնակիչների գործունէութեան և հասարակական կեանքի մէջ նոր մտնող անտարբեր երիտասարդութեան հետ: Ամենից առաջ հարկաւոր եմ համարում մի քանի խօսք ասել քաղաքի մասին և ապա հասարակութեան, ընթերցողներին ծանօթացնելու նպատակով: Թէլաւը որ իւր գեղեցիկ դիրքով օդով և առողջարար ջրով մի ժամանակ վրաց թագաւորների և թաւադների ամառանոցն է եղել, և երբեմն լինաբնակ էգզիների ապաստակութեան տեղ, այժմ ունի 1500—2000 տուն հայ և վրացի բնակիչներ. հայերը երեք անգամ աւելի են վրացիներից, և որոնք պարապում են մեծ մասամբ գինու վաճառականութեամբ: Սրանցից շատերը Տփխիսում և Անդրկովկասի այլևայլ քաղաքներում ունին գինու նկուղներ, ուր ուղարկում են վաճառելու մեծ քանակութեամբ գինի: Այստեղ գինին պատրաստում են հին-նահապետական ձևով: Թէլաւի հայերը մեծ մասամբ գաղթած են Ղարաբաղից և Գանձակի գիւղերից, սրանից երկու հարիւր տարի առաջ, սրանց ձեռքն է տեղական վաճառականութիւնը և արհեստների մէջ շատ յառաջ չեն գնացած, բայց դերձակութիւնից. դերձակները միայն աշխատում են իրանց արհեստը ծաղկեցնել և որքան կարելի է նմանացնել եւրոպականին: Այստեղի հայերը աւելի զարգացած են քան թէ տեղական վրացիները, միայն վրացիք գերադասում են հայերից նրանով, որ նրանք խօսում են իրանց մայրենի լեզուով և որքան կարողանում են՝ աշխատում են արծարծել գիւղերի մէջ ևս մայրենի լեզուի ուսումն, բանալով դպրոցներ: Բայց հայերը տարաբաղդաբար շատ անհոգ են, չեն պի մայրենի լեզուն, նրանք մի բառ անգամ չը գիտեն հայերէն, ամբողջ քաղաքում 50 մարդ հազիւ կը գտնուի հայերէն խօսել իմացող, ի հարկէ սոցա մէջ և հոգևորականները: Մինչև այժմ սրանք աշխատում էին կրթել իրանց մանուկները վրաց լեզուով, բայց այս վերջին ռուս-տաճկական պատերազմից յետ, սրանց մէջ ծըլնաւ մի ցանկութիւն, այն է կրթել իրանց մանուկները մայրենի լեզուով և ծանօթացնել նրանց իրանց պապերի ու հայրենիքի պատմութեանը, ապագայ տօնութեանս առաջ կը բերեմ հետևեալը. անցեալ տարիները տեղիս ս. Վարդանեան հոգևոր ղպրոցը ունեցել է 25—30 աշակերտ, իսկ այժմ ունի մինչև 61. նոյնպէս ս. Գայիանեան օրիորդական դպրոցը ունեցել է 35—40 աշակերտուհի. իսկ ներկայումս ունի մինչև 72. և եթէ այդպէս իւրաքանչիւր տարի դպրոցի սանների թիւը կրկնապատկուի, յուսալի է, որ մի հինգ կամ վեց տարուց տեղի ապագայ սերունդը բոլորն էլ կը խօսեն հայերէն և կ'ունենան փոքր ի շատէ գաղափար իրանց ազգութեան վերայ: Վրացիներն խօսել և վրաց լեզուն իմանալը տեղիս հայերը փառք ու պարծանք են համարում իրանց համար, մի խօսքով վրաց լեզուն, նրանց սովորութիւնները և ուրիշ բնական տիպերը ու յատկութիւնները արիւն և մարմին են դառել սրանց համար: Այստեղ չը կայ կենդանի գործող, ազդային գգացմունքով ու եռանդով մի երիտասարդութիւն, որոնք ստանային հայոց լրագիրներ և ուրիշ պարբերական հրատարակութիւններ, որոնցով կարելի լիներ զարթեցնել նրանց սրտի և հոգու մէջ մայրենի լեզուի ուսմնասիրութիւնը:

Այստեղ ևս կան հայ տիկնայք և օրիորդներ, որոնք պակաս ձգտող չ'ունեին դէպի մոդան, դէպի նորաձևութիւնը, որանք ևս աշխատում են այդ սովորութիւնը, որքան կարելի է յառաջ տանել և ընդհանրացնել, սրանք ևս զուրկ չեն մարդկային ուրախութիւններից, այսինքն գնում են հարսանիքներ, խնճոյքներ, և վէչերներ, ուր պարում են և խաղում են լօտօ, և երբեմնապէս առանձին երեկոներ էլ նշանակում լօտոյի համար, փոխանակ տանը նստելու. և իրանց մանկանց դաստիարակելու:

Վրդ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ

Անգլիական պաշտօնեայ մարքիզ Հարթինգտօնը Բէքկրօնում խօսած ճառի մէջ յայտնեց գլխաւորապէս հետևեալ մտքերը. Մեզ մեղադրում են մեր հակառակորդները այն բանում, որ մենք դիմադրութեան (օպօզիցիայի) մէջ գտնուած ժամանակում պատապարել ենք Բէրլինի պայմանագիրը, իսկ երբ պաշտօնէութեան մէջ մտանք, սկսել ենք նրա կատարման համար աշխատել: Մենք երբէք անպայման չենք դատապարտել այդ պայմանագիրը, մենք յայտնել ենք միայն, որ նա կարող էր աւելի լաւ լինել: Մեր հակառակորդները ամենից աւելի նշանակութիւն են տուել պայմանագրի մէջ միմիայն ռուսական զօրքերի հեռանալուն Թիւրքիայից, իսկ Թիւրքիայի իշխանութեան տակ գտնվող ժողովրդների վիճակի բարւոքումը նրանց համար երկրորդական խնդիր է: Այժմս մինչև անդամ նախկին պաշտօնէութեան անդամներից մէկը, Լորդ Սալիսբիւրին բոլորովին դատարկ վէճ է համարում, թէ հողի այս մի կտորը պէտք է արդեօք Մօնտէնէգրոյին ընկնի թէ Ալբանիային: Նա մռնանում է, որ մի կտոր հողից կախուած են լինում մի երկրի բարեկեցութիւնը և խաղաղութիւնը: Բայց խնդիրը դրա մէջը չէ, այլ նրա մէջը, որ պէտք է Թիւրքիային ստիպել հասկանալու թէ պայմանագրի մէջ պարտաւորութիւնը հասասար այժ ունի երկու կողմի համար էլ: Եթէ Ռուսիան պարտաւորուած էր Թիւրքիայի հողից հեռանալու, նոյնպէս և Թիւրքիան պարտաւոր էր կատարելու իւր խոստումները, որոնք պայմանաւորել էին Ռուսիայի հեռանալը Թիւրքիայից:

Միւս տէրութիւնների օգնութեամբը մեզ յաջողուեցաւ հարկադրելու Բ. Դրան այդ պարտաւորութիւնները կատարելու. Բուհաստանի և Մօնտէնէգրոյի վերաբերմամբ, և այժմ Լորդ Դէֆֆէրինը աշխատում է հասնել միևնոյն բանին Հայաստանի վերաբերմամբ:

Եթէ մենք չենք կամենում, որ եւրօպական խաղաղութիւնը պարբերաբար խանգարուի Թիւրքիայի և իւր հպատակ քրիստոնեայ ժողովրդների մէջ խռովութիւնների պատճառով, մենք պէտք է Դրան մէջ այն հաւատը մոցնենք, որ ոչ թէ միայն Ռուսիան, այլ ամբողջ Եւրօպան վերահսկում է Դրան իւր վերայ առած պարտաւորութիւնների կատարմանը: Լորդ Սալիսբիւրին իւր Բրիստօլում խօսած ճառի մէջ ասում է, որ այն քաղաքականութիւնը, որը Թոյլ է տուել Ռուսիային անցկացնելու անդրկասպեան երկաթուղին մինչև Ասկարատ և իւր առաջապահ իշխանները առաջացնելու մինչև Մերվ, չէ կարելի յաջող անուանել անգլիական շահերի վերաբերմամբ: Ջարմանում եմ, որ քաղաքագէտ մի մարդ, որ այդպէս ջանքով ուսումնասիրել է Միջին Ասիայի գործերի դրութիւնը, կարող է այդպէս սխալուել, ըստորում ռուսական երկաթուղին չի հասած մինչև անգամ կասպից ծովի և Ասկաբատի մէջ ճանապարհի կէսը, և թէ ոչ մէկ ռուս դինուոր ոտքը չէ դրել Մերվցի Թուրքմէնների բնակած հողի վերայ: Դիցուք թէ այդ այդպէս է. բայց մենք ինչով ենք մեղաւոր այդ բանում, և թէ ինչ միջոցներով դրանց առաջը կ'առնէր նախկին պաշտօնէութիւնը: Լորդ Սալիսբիւրին լաւ յայտնի է, որ ռուսաց յարձակողական շարժմունքը Թուրքմէնների երկրում սկսուեցաւ մեր Աւղանստան մտնելու հետ միասին, և այդ շարժմունքի յաջողութեանը խանգարիցին նոյն իսկ Թուրքմէնցիները, և ոչ Թէ մեր յաղթութիւնները և պարտութիւնները Աւղանստանում (լսեցէք): Լորդ Սալիսբիւրին ասում է. «Ինչ որ էլ ասեն նախկին պաշտօնէութեան քաղաքականութեան վերայ Աւղանստանի վերաբերմամբ, նա գոնեայ այն օգուտը բերեց, որ նա հեռացրեց Աւղանստանից ռուսական դեսպանութիւնը և յաբխաեան վերջ դրեց Ռուսիայի քաղաքականութեան ներգործութեանը այդ երկրում: Ես շատ պատճառաբանութիւններ էի լսել Աւղանստանի արշաւանքի մասին, բայց Թէ այդ եղել է մի խաղաղ դեսպանութիւն հեռացնելու այնտեղից, այդ առաջին անգամն է, որ լսում եմ: Ջեմ կարծում, որ այդ տեսակ «մենք դուրս քշեցինք սրա դեսպանութիւնը» խօսքերը կարող են դուրեկան լինել մեզ բարեկամ տէրութեան և երկու տէրութիւնների մէջ յարաբերութիւնները, որոնք առանց այն էլ անդադար մրցութեան և կասկածանքի են են Թարկուած, աւելի լաւանան (հաւանութիւն):

Ինչ վերաբերում է մեր քաղաքականութեանը, մենք երբէք չենք հետևել բացառապէս անգլիական շահերին, երբէք չենք հաշուի առել միայն նրանց: Մենք աշխատել ենք մեր նեռից տանել և եւրօպային և այդ բանը մեզ յաջողուեցաւ: Ընդմարիս է, այդպիսի մի քաղաքականութիւն մի փոքր դժուարացնում է գործողութիւնը, բայց այն էլ կայ, որ երբ դա միանգամ մի բան վճռել է. էլ ոչ մի բան չի կարող ընդդիմանալ այս վճռին (բարձրաձայն հաւանութիւն):

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բէրլինում յառաջադէմների մանաժողովը վճռել է տարածել մեծ քանակութեամբ տպած Ռիխտերի առաջին ճառը պարլամէնտում, որը պարունակում է իւր մէջ կայսրի գահական ճառի քննութիւնը. Այդ վճիռը վրդովումէ այժմ կիսապաշտօնական Թերթերը, որոնք նրա մէջը տեսնում են մի յանդգնի վարմունք, որովհետև այդ ճառը դրված է իբրև հաւասար կայսրի գահական ճառին, որի անագին քանակութեամբ տպած օրինակները ուղարկվում են ամեն տեղ Գերմանիայում:

—

1881 ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ը ՈՒՐԲԱԹ ՕՐԱԹԵՐԹ Ա ԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
№ 250–ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ 1 ԳԻՆԸ ՄԻ ԿՈՊԵԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՎԱՆԳԱՆ»

(ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՂԱԶԱՐԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ)

Ա. ՓՈՓՈԽԵԱՆ, 28-ԴԻ ՏԱՐԻ

Ամենայն վերապահութեամբ ընդունելով ռուսական կառավարութեան ներկայ ուղղութիւնը, մենք չենք կարող չհաստատել, որ նա ոչ միայն ոչ մի քայլ չի արել դէպի ազգաբնակչութեան ներկայացուցիչները, այլ ընդհակառակն, ամենայն առիթներով ցոյց է տուել, որ նա ամենեւին չի ուզում ոչ մի կերպ հաշտուել նրանց հետ։ Ամենայն ինչ, որ կատարւում է Ռուսաստանում, ամենայն ինչ, որ ասւում է նրա մամուլի կողմից, ամենայն ինչ, որ գրւում է նրա պաշտօնական շրջանների կողմից, ամենայն ինչ, որ ասւում է նրա պետական մարդկանց կողմից, ամենայն ինչ, որ կատարւում է նրա ներքին կեանքում, ամենայն ինչ, որ ասւում է նրա ներկայացուցիչների կողմից արտասահմանում, ամենայն ինչ, որ կատարւում է նրա արտաքին քաղաքականութեան մէջ, ամենայն ինչ, որ ասւում է նրա դիւանագէտների կողմից, ամենայն ինչ, որ կատարւում է նրա ներքին կեանքում, ամենայն ինչ, որ ասւում է նրա պետական մարդկանց կողմից, ամենայն ինչ, որ գրւում է նրա պաշտօնական շրջանների կողմից, ամենայն ինչ, որ ասւում է նրա մամուլի կողմից, ամենայն ինչ, որ կատարւում է Ռուսաստան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐԻ և ՋԵՒԻ ուսուցիչ Գրիգոր և Շուշանիկ Անանեանցները Ախալցխայից վերադառնալով Տփղիս՝ կամենում են կանանց և երեխայոց հագուստների կարել և ձևել սովորացնելու համար արհեստանոց բաց անել, եթէ աշակերտուհիների թիւը 15-ի հասնի:

Աշակերտուհիք կարող են լինել և տիկիններ: Արհեստը կ'ասանդուի մայրենի լեզուով: Սովորելու պայմաններին տեղեկանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել Գ. Անանեանցին կուկիա, Միքայէլեան փողոց, տուն № 27 որտեղ ընդունում են կանանց հագուստների պատուէրներ:

Անեանցները աւելացնում են և այս, որ իւրեանց արհեստանոցում սովորած աշակերտուհիները ամենաազատ կերպով կարող են բէմէլէննի ուպրավայում հարցաքննութիւն բռնել:

Յօգուտ Տփխիսի բէալական ուսումնարանի աշակերտաց ապագայ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ, *ժողովւում են հայերէն ընթերցանելի գրեանք. Ցանկացողք թո՛ղ բարեհաճին ուղարկել իրանց նուէրները «Մեղուի» խմբագրութեան կամ պ. Զ. Գրիգորեանցի «Կովկասեան» գրավաճառանոցի հասցէով:*

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է կամար Տէր-Գաբրիէլեանցի «РУССКОЕ СЛОВО»—*նոր դասագիրք ռուսերէն լեզուի, հայ դպրոցների համար, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ: Ընդունված է Վրաստանի և Իմերէթի և Երևանայ Թեմերի հայոց բոլոր ուսումնարաններում, նոյնպես Կովկասի և միւս Թեմերի ուսումնարաններից շատերում: Վաճառվում է Թիֆլիսում բացառապէս «Էնդրոնական» գրավաճառանոցում: Գինն է 45 կոպէկ: Գումարով գնողներին քանակութեան համեմատ զիջումն կը լինի: Յանկացողները պէտք է ուղղակի դիմեն «Էնդրոնական» գրավաճառանոցին.* Տիֆլիսъ. «Центральная книжная торговля»:

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ» *անցեալ տարուայ անդամները և յանկացողները անգամ դառնալու կարող են դիմել ընկերութեան դանձապահ պ. Մովսէս Թաւադեանին, Թիֆլիսի առևտրական բանկա անդամներկայացման վճարը հաւուրցանելու և տոմսակ ստանալու:*

ԳՈՐԾԱՐԱՆ ԿԱՇԻՈՑ

Ց. Կ. ՊԱՐՈՆԵԱՆ.

Ի քաղաքին Խարատուբաղարի Տաւրիկ նահանգի.

Պատիւ ունիմ յայտնելու յարգոյ հասարակութեանը իմ հնգետասնամեայ փորձը ցոյց տուած և մաքրված Ֆրանսիական մէթոտով պատրաստելու կաշի պատրաստելու յաջողացաւ և ես այդ արհեստը կատարելագործեցի և կաշին համեմատաբար ժամն զիներով եմ վաճառում. վասն որոյ կ'ընդունիմ պատուէրներ և ամենամեծ ճշդութեամբ կը պատրաստեմ և առանց յետաձգութեան կ'ուղարկեմ ռուսական ընկերութեան գրասենեակի ձեռքով (через контору русскаго общества) *որոյ համար բաւական է միայն կանխապէս ուղարկել տասներորդ մասն արժէքին, կաչւոյն կապը կը բաղկանայ 20 կէսերից, այս լինքն 10 ամբողջ կաչուց, որոյ քաշն է 8 փունդ չափ: Այժմեան տեղական գինն է 24 ռուբլի: Յանկացողները կարող են դիմել ինձ հետևեալ հասցէով:* Коженевное заведеніе О. Е. Баронову. Въ Г. Карасубазаръ, Таврич. губ.

«ՀԱՅՈՑ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ» խնդրի միակը առաջ տանելու և իր նպատակին հասցնելու համար՝ զեռ ևս ժողովում ենք փոխադրութիւններ այս տարվայ «Փարձ»-ի II համարում հրատարակուած մեր հինգ հատուածների մասին.—Միևնոյն տեղից կարելի է ուղարկել մի քանի փոխադրութիւններ: Հրաւիրում ենք ստորագրութիւնները, որոնք ցանկանում են մեր մանուկ գրականութեան զարգացումն և կարող են օգնել մեզ այս գործում.

Ց. Նազարեանց.

Արդէն սկսել եմ Թարգմանել ДѢТСКАЯ БИБЛІОТЕКА. «ФЕЛИКСЪ или ВЕЛИКОДУШНЫЙ ЮНОША» *գրքուկը. խնդրում եմ այն անձանց, որոնք պարապում են մանկական գրքեր հրատարակելով կամ թարգմանելով, բարեհաճին յայտնել լրագրով, այս գրքի հայերէն թարգմանուած լինելը կամ չը լինելը:*

Վարդան Եղիազարեանց.

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի «ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԻԱԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ» *առաջին հատորը* (Ա. գրքոյկ), *որ բովանդակում է իր մէջ միայն հէքեաթներ, ժողոված երևանեան նահանգում և գրած բուն տեղական բարբառով:*

Այժ Ա. գրքոյկի անմիջապէս լոյս տեսնելու յետոյ, մամուլի տակ կը մտնի նորա Բ. գրքոյկը:

*Իսկ երբ կը վերջացնենք մեր ունեցած հէքեաթների տպագրութիւնը, այնուհետև ձեռնամուխ կը լինենք ժողովրդական աւանդութեանց միւս տեսակների հրատարակութեան—***ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ, ԱՌԱՍՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ, ԱՆԵԿԴՈՏՆԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ** *և այլն (որոնցից մեծ քանակութեամբ ունենք ժողոված) լոյս ածելով նոյնպէս առանձին գրքոյկներով:*

Յուսով եմ, որ մեր պատեհի օտարաքաղաքացի համաղգայինք չեն զլանալ իւրեանց կարեաց չափ աջակից լինելու ինձ այս ձեռնարկութեան մէջ:

Բաւականաչափ նիւթ ուղարկողները որպէս այս հրատարակութեան աշխատակիցներ՝ այնուհետև տպագրուելի բոլոր գրքոյկներից միմի օրինակ ձրի կը ստանան, բացի այս՝ նոցա աղդանունները կը տպագրուին գրքոյկի վերջը: Իսկ այն պարոնները, որոնք այս աւանդութիւններից նոյնպէս մեծ քանակութեամբ ժողոված ունին և կը ցանկան իւրեանց ժողովածուն վաճառել թող բարեհաճին յայտնել իւրեանց պայմանները:

Նիւթերը հարկաւոր է զրել (գրածը խնդրում ենք մաքուր լինի և որշ) բուն տեղական բարբառով, դնելով ժողովածուի վերջը տեղական դժուարիմաց բառերի բացատրութիւնները:

Իմ հասցէն՝ Вагаршапатъ. *Тиграну Навасартяцу.*

Տ. Նաւասարդեանց.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

ԹՈՒՐՔԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սիստեմատիկական ընթացքի հայոց միջնակարգ ուսումնարանի համար: ՍԻԱՆ ԱՌԱՋԻՆ (*ամբողջ Թուրք*): ԵՐԿ. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԺԱՊԵԱՆ, *հրատարակութիւն Բ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան.* ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԷԿ.

Վաճառվում է բացառապէս թիֆլիսում Բ. Շահվերդեանի գործակալութեան խանութում:

Ուսումնարանները և գումարով առնողները ստանում են 20% զիջումն:

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն հեռևեալ հասցէով. Въ Тифлисъ. Газетное агентство ШАВЕРДОВА.

ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻՍ *վարժուհիներ պատիւ ունի յայտնելու հայ հեղինակների և գրավաճառների որ նոքա բարեհաճեին իւրաքանչիւր նոր տպված հեղինակութիւններից մի մի օրինակ ուղարկել ընթերցարանիս անուամբ, որի վճարը՝ եթէ նուիրված չէ, ընթերցարանիս վարչութիւնը պարտ կը համարի անյապաղ հասցնել ըստ պատկանելոյն:*

Տնօրէն ընթերցարանի՝

Բժ. Արամեանց.

ՉԵՆՀԱՍՑՐԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

26-ին Նոյեմբերի

Գօլովաչեվին, Սեվաստեանովին, Հասքենկլին, Իսոիֆ Իբրայիմովին, Վասիլիյ Կօրօվինովին, գեներալ Սմէկալովին, Գուտա Բահվին:

Լոյս տեսաւ երեխայական ԼՕՏՕ, Տփխիսի բէալական ուսումնարանի հայ-աշակերտների հրատարակութեամբ: Վաճառվում է (յօգուտ նոյն դպրոցի աշակերտաց ապագայ **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ**) Կովկասեան, Էնդրոնեան գրավաճառանոցներում և Կուկիայի կամրջի վերայ պ. Մատեոսեանցի խանութում: Գինն է 50 կոպ:

Ջ. Գրիգորեանցի գրաքննութիւն ստացուել է Բօստանջի—Տէր-Աբրահամեանի — **ՕՐԱՑՈՑԸ.** 1882 թ: Գինն է 15 կ.

Դուրս եկան մեր տպարանից և վաճառվում են նոյեմ. 25-ից սկսեալ.

Ա. ԱՄԵՆՕՐԵԱՑ ՀԱՅՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԱՑՈՑ 1882 Փ. Թ.

Մեծ Թուանշաններով, Հայկական կիւբակիներն տպուած են կապոյտ գոյնով, իսկ կայսերական տօն օրերն տպուած են կարմիր գոյնով: Դրուած են հայկական, Յուլիանեան և Գրիգորեան բոլոր օրերը, ամիսները և Թուականները: Լուսինը ևս դրուած է:

Առ այժմ համառ. դրուած են, օր. պատմական անցքերը հայոց, մահ նշանաւոր անձանց հայոց:

Օրացոյցի տախտակն զարդարուած է գեղաքանդակ գեղեցիկ պատկերներով, կրօնական և ազգային յիշատակարաններով, դաստառակի, և ս. Էջմիածնայ պատկերներով: Եւ այս բոլորը մի զարդ է ամեն մի հայի գրասենեակի համար:

Գինն է մէկ ռուբլի

Բ. մեծադիր ՕՐԱՑՈՑ 1882 թ. Փ.

Բոլոր օրհ. հրց. մկ. հմբ. և այլն գրուած են կարգաւ: Հանդերձ **«ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ» Է. տ. յաւելուածով:**

Սկզբում գեղաքանդակ պատկերով

Ա. Առաքինաղոր Հայրապետին մերոյ. **ՍՐԲՈՑՆ ՎՐԴԱՆԻՍԻ:**

Բ. և կարուց պաշարման. **ԼԱԶԱՐԵԱՆՑԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ.**

Գինն է մինչև 600 վէրստ 35 կոպ. իսկ նորանից բարձր 40 կոպ

Գ. փոքրադիր ՕՐԱՑՈՑ 1882 թ. Փ.

Բոլոր օրհ. հրց. մկ. հմբ. և այլն գրուած են կարգաւ: Հանդերձ 2 գեղաքան. պատկերներով երջանկայիշատակն **ՆԵՐՍԷՍ** Ե. կաթուղիկոսն և ջէմն Բրայս Հայասերն անգղիացի: Գինն է 15 կոպ: Բոլոր 3 տեսակ օրացոյցներից գումարով գնողներին զէջըմ կը լինի:

Յանկացողները կարող են, դիմել մեզ այս հասցէով. Въ Г. Эриванъ Խմբագիր և Հրատարակիչ Սրգար Գուլամիրեանց.

А. С. Гуламирянцъ 4—5

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

„ДОНСКАЯ ПЧЕЛА“

НА 1882 ГОДЪ.

Съ 1-го Января 1882 года „Донская Пчела“ будетъ издаваться по той-же программѣ, какъ издавалась въ предъидущіе шест лѣтъ, два разьа въ недѣлю.

Редакція, по мѣрѣ силъ и возможности выполняя обязанности провинціальной прессы, находитъ, что „Донская Пчела“ уже достаточно знакома публикѣ, почему и считаетъ всякія рекламы положительно излишними.

ПОДПИСНАЯ ЦѢНА ОСТАЕТСЯ ПРЕЖНЯЯ.

Съ доставкою въ Ростовѣ н. Д.		*Съ пересылкою иногороднимъ*	
На годъ	6 руб.	На годъ	7 руб.
„ ½ года	3 „ 50 к.	„ ½ годъ	4 „
„ 3 мѣсяца	2 „	„ 3 мѣсяцъ . . .	2 „ 50 к.

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Подписка принимается къ конторѣ редакціи „Донской Пчелы“ въ Ростовѣ-на-Дону, на Большой Садовой улицѣ, въ домѣ И. А. Теръ-Абраміянъ. Иногородніе благоволятъ адресоваться: въ редакцію „Донской Пчелы“ въ Ростовъ на Дону.

Редакція покорнѣйше проситъ гг. иногородныхъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 25-го Декабря сего 1881 года подписныя деньги за 1882 г., будетъ разосланъ БЕЗПЛАТНО, въ видѣ преміи, „ДОНСКО-АЗОВСКІЙ“ русско-армянскій календарь на 1882-й годъ.

Редакторъ-Издатель *И. А. Теръ-Абраміянъ.*

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Թիֆլիսի *առևտրական բանկա անդամներկայացման վճարը հաւուրցանելու և տոմսակ ստանալու:*

Նորերումս լոյս տեսաւ և վաճառվում է Էնդրոնական գրավաճառանոցում **ԳՐԱԲԱՌԻ ՀՈԼՎՈՒՄԸ** *մի աղուսակի մէջ գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար: Գինն է 15 կոպէկ:*

ՄԻ ՀԱՄԵՍՏ ԸՆՏԱՆԻՔ

ընդունում է երկու երեխաներին կերակրելու և ամենայն կերպ հոգալու նրանց վրայ: Հարցնել Էնֆիրաճեանցի տպարանում Նազարեանցին:

5—6

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 30-го Ноября 1881 г.

Տպարանի Մ. Ռոտինեանց և ընկ.